



**ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՏԱՐԱԾՈՒՄ ՀԵՌԱՎՈՐ  
ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ**

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ համատեղ հրավիրում են մարզերում բնակվող **17-35** տարեկան երիտասարդների մասնակցելու **անգլերենի առցանց ուսուցման անվճար** ծրագրի:

Ծրագիրը նախատեսում է երկու առանձին դասընթաց՝ **Ընդհանուր անգլերեն** սկսնակների համար և **Բիզնես անգլերեն**:

Մրցութային կարգով ընտրված մասնակիցները հնարավորություն կունենան ձեռք բերել համապարփակ գիտելիքներ անգլերենից, որի արդյունքում կտիրապետեն աշխարհի ամենապահանջված լեզուներից մեկը և կօգտագործեն այն որպես հաղորդակցության և մասնագիտական զարգացման միջոց: Դասավանդման ժամանակակից մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների համադրման շնորհիվ ուսուցման գործընթացը կլինի հետաքրքրական, դյուրին, ինչպես նաև կնպաստի հավելյալ հմտությունների ձեռքբերմանը:

**Ընդհանուր անգլերեն**

Դասընթացը նախատեսված է սկսնակների համար: Փուլի ավարտին մասնակիցները կունենան Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR) սանդղակի A1 (լեզվի տարրական իմացության) մակարդակի համապատասխան անգլերենի իմացություն: Դասընթացն ունի 24 շաբաթ տևողություն, որը ներառում է շաբաթական երկու առցանց (online) դաս՝ 1.5 ժամ տևողությամբ և ողջ դասընթացի համար չորս լսարանային դաս:

**Բիզնես անգլերեն**

Նախատեսված է CEFR սանդղակի B1 (ինքնուրույն սովորողի) մակարդակի համապատասխան անգլերենի իմացություն ունեցողների համար: Փուլի ավարտին մասնակիցները կունենան վերը նշված համակարգի սանդղակի B2 (ինքնուրույն սովորողի) մակարդակի համապատասխան՝ առօրյա որակյալ տիրապետողի անգլերենի իմացություն: Դասընթացն ունի 24 շաբաթ տևողություն, որը ներառում է շաբաթական երկու առցանց (online) դաս՝ 1.5 ժամ տևողությամբ և ողջ դասընթացի համար չորս լսարանային դաս:

**Մասնակցության պայմաններ**

*Դասընթացին մասնակցությունն անվճար է՝ ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցության շնորհիվ: Այնուամենայնիվ, մասնակիցները պիտի ունենան անհրաժեշտ տեխնիկա և ինտերնետ կապ, ինչպես նաև պարտավորվում են մասնակցել դեմ առ դեմ լսարանային դասերին, որոնք տեղի կունենան իրենց բնակության վայրից ոչ հեռու (վայրը կհստակեցվի կազմակերպիչների կողմից):*

*Կրթական նյութերը կտրամադրեն, ինչպես նաև ծրագրին առնչվող բոլոր ծախսերը կհոգան կազմակերպիչները:*

*Դասընթացների ավարտից հետո մասնակիցներին կտրվեն վկայականներ:*



### Ովքեր կարող են մասնակցել դասընթացին

- Համակարգչին տիրապետող և ինտերնետային կապի հասանելիություն ունեցող,
- ՀՀ մարզերում բնակվող 17-35 տարեկան երիտասարդները:

### Դիմելու կարգը

Ցանկացողները պետք է լրացնեն դիմում-հայտը՝ ներբեռնելով [Ընդհանուր անգլերեն սկսնակների համար](#) կամ [Քիզնես անգլերենի](#) հայտածևր և ուղարկելով լրացված տարբերակը [syuzanna.khachatryan@coafkids.org](mailto:syuzanna.khachatryan@coafkids.org) էլեկտրոնային հասցեին՝ նամակի գլխագրում (subject) նշելով «Student application»: Դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ **2017թ. նոյեմբերի 30-ը, ժամը 18:00:**

Լրացված հայտերի ուսումնասիրությունից հետո կանցկացվի անգլերենի գրավոր թեստ՝ ծրագրին ընդգրկվելու համար անգլերենի իմացության մակարդակը ստուգելու նպատակով:

Լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք դիմել Հայաստանի մանուկներ հիմնադրամ՝ հետևյալ հեռախոսահամարներով՝ (093) 00-86-45, (010) 50-20-76: